

«այդ ոչ ոք չի կարող ասել իւր մասին, մանաւանդ մտածել»։ ուրեմն նշանակում է իրաւունք չունի քար ձգել և զրկել նոռոգուելու, արդարանալու ու որբուելու հնարաւորութիւնից «Ով կի՞ն, ո՞ւր են քեզ մեղադրողները, «ոչ ոք չըմեղադրեց քեզ»։ նա պատասխանեց։ «Տէր, ոչ ոք»։ Յիսուս ասաց նրան։ «Ես եւ չեմ դատապարտում քեզ, դնա՛ և այլես չըմեղանչես»։

Փրկչի այդ բազմաբովանդակ խօսքը պատասխան է ըոլութին, որոնք կամենում են իմանալ եկեղեցու հայեացքը մահուան պատժի մասին։

— «Գնա՛ և այլես չըմեղանչես»—միայն այդ կարող է մեւզաւորին պատիփ որոշել։

Մ. Քահ. Զելցով.

## ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

«Taigliche Rundschau» թերթի Հռոմի թղթակիցը հաղորդում է մի քանի տեղեկութիւններ ներկայ պապի վատիկանում մտցրած խնայողութեան մասին։ Հակառակ իւր նախորդի որը թէև անձամբ չափաւոր կեանք էր վարում, բայց միջոցներ չէր խնայում փարթամ՝ զուտ արքայական սարք ու կարգի բազմաթիւ պալատական պաշտօնութեան վրայ, Պիոս X իւր բուժուազական սովորութիւններով զանազան ներկայացուցչութեան մասին շատ չի հոգում և որտեղ միայն հնար է կրծատում է իւր տնտեսութեան ընդարձակ ծախսերը և խնայողութիւն մտցնում։ Բացի անձնական ճաշակից՝ խնայողութեան հարկադիր հանդամանքն այն է, որ ֆրանսայից ստացուող եկամուտներն այսուհետեւ հաւանականաբար կրծատուելու են, մինչդեռ «ո. Պետրոսի լուման» ամենից շատ ֆրանսիայից էր ստացւում։

Առօն XIII պապը իրեն հաւատարիմ ազնուականներին պաշտպանելու համար իւր ժամանակին դրամականն նպաստներ էր տուել այն մի քանի ընտանիքներին, որոնք վնասուել էին Բօրգեղէ և Պիօմբինո քանիերի մնանկանալուց։ Պիոս X հրամայեց յիշեցնել պարտապաններին իրենց պարտքը և առաջարկել, որ վճարեն։ Խնայողութեան նպատակով պապը վճռեց զգալի կերպով քչացնել դպրոցների թիւը, որոնք մեծ թուով բացուել և պահուում էին Հռոմում պետական և քաղաքական «անհաւատ» դպրոցների հետ մրցելու և որոնց պահպանութիւնը 1 միլիոն ոսկի էր նստում։ Խախսերի կրծատման նպատակով վեր-

ջերո փակուած է նաև կօլլեգիաներից մինը, իսկ Հարաւային Ամերիկայի կօլլեգիայի պահանութեան համար դրամ է պահանջուած տեղական եպիսկոպոսներից և կանոնաւոր ժողովելու համար նշանակուած են յատուկ գանձապահներ։ Խուրերին նայելով Պիոս X պապը մտադիր է կը ճամատել և իւր զինուորական շատարը, որը ներկայումս կազմուած է երեք թիկնապահ գնդերից՝ ազնուական, զուիցերական, պալալինական և ժանդարմերիայից թէ ինչ աստիճանի է համուում պապի խնայողութիւնը երեսում է նրանից, որ նա այս տարի չընայեած շոգերին խնայողութեան համար իւր օծման տօնը չըկատարեց ո. Պետրոսի տաճարում, այլ սիկստինեան կապելլայում, որովհետեւ պապական իւրաքանչիւր պատարագը՝ պատգամաւորների, գահը սարքելու և թիկնապահների ոեղանի համար պահանջում է 4000 ռոկու ծախք։ Բայց այդ բոլոր կրնատումները շատ քիչ են օգնում պապական գանձարանին, և քանի որ մնում են կարդինալների և կոնսոնիկոսների մեծամեծ ռոճիկները պապը միշտ հարկադրուած կլինի նորանոր միջոցներ գտնելու հոգեոր դատարանի պահպանութեան համար։

Վերջին երեք ամիսների ընթացքում Գերմանիայում և Աւստրիայում տեղի ունեցան կաթոլիկական մի շարք համաժողովներ, որոնք զդալի կենդանութիւն մտցըին այդ երկիրների եկեղեցական կեանքում։ Յունիսին գերմանիայի կաթոլիկական եպիսկոպոսները, որոնք իւրաքանչիւր տարի ժողովւում էին Ֆուլդում ո. Բօնիֆացիոսի գերեզմանի մօտ, այս տարի տօնում էին նրա նահատակութեան 1150 ամեակը, որպէս Գերմանիայի լուսաւորչի։ Տօնի օրը կատարուեց հանգիսաւոր թափոր տեղական որբութիւններով (ի միջի այլոց ո. Բօնիֆացիոսի գրքերով, գաւագանով, դանակով աջով և գլխով)։ Հետեւեալ օրը յունիսի 5-ին եպիսկոպոսները հովուական շրջաբերականով դիմեցին գերմանական կաթոլիկներին և մի քանի ժամանակակից հանգամանքների համապատասխան գասեր տուին՝ քաղելով նրանց նիւթը ո. Բօնիֆացիոսի կեանքից ու գործունէութիւնից Բօնիֆացիոսը, գրում էին նրանք, քրիստոնէական կրօնի առաքեալ էր, եկեղեցական միութեան նախանձականդիր, որին գերմանական եկեղեցին պարտական է սուրբ Աթոռի հետ իւր ունեցած միութեամբ և ժամանակակից քաղաքակրթութեամբ։ Նորա այստեղ ցոյց տուած առաքինութեան օրինակներին պէտք է հետեւն գերմանական կաթոլիկները և նրանից պէտք է օրեւ-

նակ առնեն կաթոլիկ քահանաները: Բօնիֆացիոսի նման պէտք է դիմագրել եկեղեցու և գողոցի իրարից անջտաժման փորձերին: Եպիսկոպոսները հրաւիրում են սրբութեամբ պահպանել գերմանական եկեղեցու և ու Սթուբ կապը՝ որպէս գերմանական ժողովրդին պարզեած մեծ բարիք:

## ԲՈՂՈՔԸԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Գտուելի Real—Encyclopedie գրքի XVI հատորում կտտանչ մուշը բողոքականութեան մասին տալիս է հետեւալ նկարագիր աշխարհի զանազան մասերում:

Բողոքականութիւնը ամենից շատ հետեւզներ ունի Ա.մէշ թէկայի Միացեալ նահանգներում, որտեղ 76 միլիոն ազգաքնառ կութիւնից 65—66 միլիոնը բողոքականութիւն է դաւանում: Այնուհետև գալիս է Մեծ Բրիտանիան 37 միլիոն բողոքական ներով Գերմանիան 35 միլիոն, որոնք բաժան եկեղեցիների, ապա նվերիան և Նորվեգիան, որտեղ կան  $7\frac{1}{2}$  միլիոն բողոքական ներ, Գանիան  $2\frac{1}{2}$  միլիոն, Առուսաստանը—6 միլիոն, Անգարիան 4 միլիոն, Հոլլանդիան 3 միլիոն, Զուլիցերիան—2 միլիոն Ֆրանսիան  $\frac{1}{2}$  միլիոն, Աւստրիան  $\frac{5}{4}$  միլիոն: Արտաքոյ Եւրոպայի Անգլիական գաղութներում, մանաւանդ կանագայում, Աւստրիալիայում, Հնդկաստանում և Հարաւային Աֆրիկայում—10 միլիոն. Եկեղեցիների թիւը—մոտ 4 միլիոն: Բողոքական ների թիւն այդպիսով ամբողջ Երկրագնդի վրայ հասնում է 180 միլիոնի: Ներքին բաժանմամբ այդ թուից 56 միլիոնը լուսաբական են, 29 միլիոն անդիական եկեղեցու հետեւզներ, կալվինականութեան հետ կապուած եկեղեցիներին հետեւզներ Եւրոպայում 32—33 միլիոն, Ամերիկայում մոտ 57 միլիոն, այլ տեղերում 10 միլիոն. ընդամենը մօտաւորապէս 100 միլիոն: Վերջին աեղեկութիւնների համեմատ կաթոլիկների թիւն է 250—260 միլիոն, իսկ Արևելեան եկեղեցուն հետեւզների թիւն է 100—110 միլիոն:

Նշանաւոր գիտնական և եկեղեցական պատմաբան Հարանակը նշանակուած է գլխաւոր վերատեսուչ Բերլինի կայսերական մատենագարանի պաշտօնից հրաժարուող Վելմանի փոխարէն: Համալսարանում իւր ուսուցչապետական ամբիոնը նա վերապահում է իրեն, բայց նրա նոր պաշտօնի պատճառով իրեն կամքի համաձայն կընշանակուի օդնական, ինչպէս ասում են, հենց իւր աշակերտներից: